առաջ Ակոռին պետական (դիվանի) սեփականություն է եղել։ Նա տալիս է նաև գյուղական համայնքի կողմից պետությանը հատուցվող հացահատիկի քանակը[12]։ Պետք է ենթադրել, որ XVII դ. 70-ական թվականներին գյուղից ստացվող մալոջհաթը և այլ հարկեր տրված է եղել այնտեղ նստող սուլթանին որպես թիուլ։ XVII դարում առանձին շրջանների հաքիմ նշանակված սուլթանների ռոճիկները մեծ մասամբ վճարվում էին ի հաշիվ նրանց պաշտոնավայրի բնակչությունից գանձվող հարկերի։ Այդպես էր օրինակ Կաղզվանի հաքիմ Նաֆաս-սուլթան Սաղլուն, որ համարվում էր տեղի թիուլդարը[13]։

Քյոթուկը ուշագրավ տեղեկություններ է պարունակում գյուղի ջրամատակարարման և ոռոգման սիստեմի մասին։ Պարզվում է, որ ոռոգումը հիմնականում կատարվել է մեծ ամբարտակի (բանդ) շնորհիվ ստեղծված ջրամբարի (գոլ) միջոցով, որտեղ կուտակվել են ձնհալից հոսող ջրերը։ Այդ ջրերով ոռոգվել են արտերն (ջրբին) ու պարտեզները (բաղչա)։ Խմելու և առտնին գործածության համար ստորերկրյա ջրանցքներ (գահրիզ) են փորվել, որոնք որոշակի մուտքեր (ղրրխայաղ) են ունեցել։ Խստորեն պահպանվել է օգտագործման կարգը, արգելելով նոր անցքեր փորելն ու ջրի հոսանքը փոխելը։

Նվիրաբերվող անշարժ ստացվածքների մեջ կան հողագործության տարբեր աշխատանքների հետ առնչվող օբյեկտներ՝ արտեր, մանր հողակտորներ (պատառ), ոռոգելի հողեր (ջրբին), հացահատիկը կալսելու առանձին հարմարություններով օժտված վայրեր՝ կալեր, այգիներ և պարտեզներ (բաղչա) և այլն։ Նվիրվող կամ «վախուպ» տրվող օբյեկտների տեղն ու դիրքը ճշտող համառոտ բացատրությունները տեղագրական արժեք ունեն։ Դրանց մեջ պահպանված են գյուղավանի ճանապարհների, մոտակա վայրերի, հանդերի, ագարակների և այլ տեղանուններ. «Սիղուտու ճանապարհին Կրկշարտու պատառներն», «Գբեռումն մեկ արտ», «Գեռեզմանուտի ճրակենց գլխի կալին կեսն», «...մէկ լաւ ջրբին ետ, Մազռումն էր», «Շինին ձոր մեկ բաղչայ, Գլուռումն մեկ պատառ ճրպին» և այլն։

Նվիրատվությունների բնույթից և որոշ նվիրատուների անուններին նախորդող և նրանց զբաղմունքը հուշող «ավել անուններից» կարելի է գաղափար կազմել բնակչության սոցիալական դրության, տնտեսության և նյութական բարեկեցության մակարդակի մասին։ Գյուղավանում եղել են մեծահարուստ խոջաներ, ինչպես օրինակ Փշրկենց գերդաստանից խոջա Հայրապետը, նրա որդին խոջա Մարգարեն և վերջինիս որդիներ խոջա Սահակը և խոջա Զաքարիան, որոնց միջոցներով են կառուցվել ջրամբարի ամբարտակն ու փորվել քահրիզն իր երեք աչքով։ Խոջա Մարգարեն կառուցել է նաև մի կարավանատուն (քարվանսարա) իր օթևաններով (օդա) և հիմնովին նորոգել Ս. Հակոբա վանքի կաթուղիկեն։ Մեծատուն խոջաների բազմանդամ գերդաստան է եղել նաև Փառակեցոնց ընտանիքը, որոնցից նույնպես երեք սերունդի նվիրատուներ են հիշված։

Նվիրատուների մեջ հիշված են նաև տարբեր զբաղմունքի տեր արհեստավորներ. ջուլհակ, որմնադիր (քանահ), փայտահատ (բալթաճի), գինեգործ (ճմլող), կոշկակար (բաշմաղչի), դերձակ (դերզիկ), մաղագործ (ալաքչի), հնակարկատ (փինայչի) և այլն։

---

12 Шопен, էջ 1083—1086։

13 Խաքանդար-բեկ Թուրքեման (Մունշի), Թարիխ-է ալամարա-յե Աբբասի, (պարսկ. բնագիր), Թեհրան, 1957, էջ 656, 743։